# «Թիվ 8 պոլիկլինիկա» ՓԲԸ

0033,ք. Երևան
Մարշալ Բաղրամյան պողոտա 51ա
հեռ. 010272760 էլ. փոստ pol.8@mail.ru

N __________

«___» _______________ 2014թ.

«ԳԱԿ-ՃՀԱՊՁԲ-11/7» ծածկագրով շրջանակային
համաձայնագրերով իրականացվող գնումների
ցանկում ներառված կազմակերպությունների տնօրեններին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՃՀԱՊՁԲ-11/7» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ Երևանի «N 8 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պոլիկլինիկա) կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել Պոլիկլինիկայի և նշված ծածկագրով շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ապրանք: Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «ՀՀԵ8Պ-ՃՀԱՊՁԲ-14/1»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտը անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Բաղրամյան 51ա հասցեով, մինչև 2014թ.-ի փետրվարի 5-ը, ժամը՝ 10.00-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Գ. Մկրտչյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն Պոլիկլինիկայի շենքում, ք. Երևան, Բաղրամյան 51ա հասցեում, 2014թ.-ի փետրվարի 5-ին, ժամը՝ 10.00-ին;

Գնման առարկա է հանդիսանում Պոլիկլինիկայի կարիքների համար՝ շինանյութերի ձեռքբերումը:

Պոլիկլինիկայի կարիքների համար՝ շինանյութերի մատակարարման (որոնք կազմված են՝ 87 չափաբաժիններից) տեխնիկական բնութագրերը,

ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N 3 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N 2): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտը անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Պոլիկլինիկայի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ pol.8@mail.ru:

Հեռախոս՝ (010) 27 27 60:

Պատվիրատու՝ Երևանի «N 8 պոլիկլինիկա» ՓԲԸ:

Հարգանքով՝ Ա. Հարությունյան

*Հավելված 1*
*«ԳԱԿ-ՇՀ ԱՊՁԲ-11/7» ծածկագրով*
*ընթացակարգի հրավերի*

*N «ՀՀ ԵՑՊ-ՇՀ ԱՊՁԲ-14/1» ծածկագրով*
*ընթացակարգի գնահատող հանձնաժողովին*

**ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ**
**ԴԻՄՈՒՄ**

-------------------------------------------------------------------------ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

ՀՀ Երևանի «N 8 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից N «ՀՀ Ե8Պ-ՇՀ ԱՊՁԲ-14/1» ծածկագրով

հայտարարված ընթացակարգի ________________________չափաբաժնին (չափաբաժիններին)
չափաբաժնի (չափաբաժինների) համարը

և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

---------------------------------------------------------------------------ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

-------------------------------------------------------------------------ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

---------------------------------------------------------------------------------------------ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

------------------------------------------------------------------------------------------:
Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե

------------------------------------------------------------------------------------------
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

--------------------------------------------
(ստորագրությունը)

Կ.Տ.

«--------» ---------------- 201 թ.
(ամսաթիվը, ամիսը)

*Հավելված 2*
*«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7» ծածկագրով*
*ընթացակարգի հրավերի*

*N «ՀՀԵՑԴ-ՇՀԱՊՁԲ-14/1» ծածկագրով*
*ընթացակարգի գնահատող հանձնաժողովին*

## Գնի առաջարկ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված N ՀՀԵՑԴ-ՇՀԱՊՁԲ-14/1 ծածկագրով ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում` կնքվելիք պայմանագրի նախագիծը, ------------------------------------------------------------------------------------------------------------------------------------ -ն առաջարկում է պայմանագիրը կատարել համաձայն հետևյալ գների`
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

(ՀՀ դրամ)

| Չափա-բաժինների համարները | Գնման առարկայի անվանումը | Արժեք * | ԱԱՀ ** | Առաջարկված գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5=3+4 |
| 1 | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>> | | | |
| 2 | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>> | | | |
| 3 | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N3>> | | | |
| ... | ... | | | |
| ... | ... | | | |

*3-րդ սյունակում նշված «Արժեքը» ներառում է իր մեջ բոլոր ծախսերը և շահույթը:
**Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:

------------------------------------------------------------------------------------------
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

------------------------------------------------
(ստորագրությունը)

Կ.Տ.

«________» __________________ 20____թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 3
«ՀՀ Ե8Պ-ՇՀԱՊՁԲ-14/1» ծածկագրով
ընթացակարգի հրավերի

# ՇԻՆԱՆՅՈՒԹԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՀՀ Ե8Պ-ՇՀԱՊՁԲ-14/1

«____» ______________ 2_____թ.

ք. Երևան

ՀՀ Երևանի «N 8 պոլիկլինիկա» ՓԲԸ-ը, ի դեմս կազմակերպության տնօրենի Ա. Հարությունյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և ____________________________-ն, ի դեմս Ընկերության տնօրեն ____ ____________________________-ի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. Պայմանագրի առարկան**

Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված շինանյութեր (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

**2. Մատակարարման պայմանները**

2.1 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին:

2.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան:

**3. Կողմերի իրավունքները և պարտականությունները**

**3.1 Գնորդն իրավունք ունի՝**

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհապաղ փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայմամանագիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը,

3.1.5 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

**3.2 Գնորդը պարտավոր է՝**

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան

պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

**3.3 Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.3.5 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

**3.4 Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7 Սույն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.8 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

## 4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագի ընդհանուր գինը կազմում է՝ ---------------------------- (-------------------------------------------------------) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Յուրաքանչյուր ապրանքատեսակի գինը սահմանված է սույն Պայմանագրի N2 հավելվածում: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Կանխավճարի մարումն իրականացվում է սույն պայմանագրով նախատեսված արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա N 3 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի համար վճարելու վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են:

## 5. Ապրանքի որակը և երաշխիքը

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

5.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

**6. Ապրանքի հանձնումը և ընդունումը**

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4):

6.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատու՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

**7. Կողմերի պատասխանատվությունը**

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Սույն պայմանագրի 1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

**8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**9. Այլ պայմաններ**

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

9.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

9.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ

հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցում.

2) սույն պայմանագրով նախատեսված ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքում շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվեն նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Սույն. պայմանագրում չի կարող կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

9.5 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են.

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

9.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9.7 Սույն պայմանագիրը կազմված է ---- էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, 2, 3 և 4 հավելվածները՝ բաղկացած ---- թերթից հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.9 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

**10.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ք. Երևան, Բաղրամյան 51ա | ------------------ |
| «Հայէկոնոմբանկ» ФԲԸ | -------------------- |
| Հ/Հ 163058361243 | ---------------------- |

| | |
|---|---|
| --------------------------------- | --------------------------------- |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված 1
«____» ________________ 2____թ. կնքված
N ՀՀԵՑԴ-ՇՀԱՊՁԲ-14/1 ծածկագրով
գնման պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

## Շինանյութերի

| Ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|
| Չ/Հ | Անվանումը | Տեխնիկական բնութագիրը (հատկանիշները) | Չափի միավ. | Քանակը |
| 1. | Ցեմենտ | Հերմետիկ փակ պարկերով, 50 կգ քաշով Մ -400 դասի ցեմենտ: | պարկ | 350 |
| 2. | Ավազ | Գետի կամ լճի լվացած կվարցային ավազ, 1...4 մմ ֆռակցիայով, 50 կգ-ոց պարկերով: | պարկ | 1000 |
| 3. | Գաջ | Հերմետիկ փակ պարկերով 50 կգ քաշով | պարկ | 100 |
| 4. | Գիպսոնիտ | քաշը 35կգ, փակ հերմետիկ պարկ. | պարկ | 50 |
| 5. | Ֆուգենֆուլեր | քաշը 35կգ, փակ հերմետիկ պարկ. | պարկ | 35 |
| 6. | Ծեփամածիկ գիպսե | Պարկերով, հերմետիկ փաթեթավորված, .30 կգ զանգվածով գիպսային կամ կավճային խտանյութով ՇեՆ Հայաստան կամ համարժեք: | պարկ | 180 |
| 7. | Ծեփամածիկ մելից | Պարկերով, հերմետիկ փաթեթավորված, 30 կգ զանգվածով գիպսային կամ կավճային խտանյութով ՇեՆ Հայաստան կամ համարժեք: | պարկ | 100 |
| 8. | Գիպսակարտոն | Գիպսաստվարաթղթե սալիկներ 1,2*2,4 մ չափսերով չոր միջավայրերում կիրառելու համար, սալիկները ամրացնելու կոնստրուկցիաներ պատրաստված 0,55 մմ հաստությամբ ցինկապատ թիթեղից պռոֆիլներ | հատ | 50 |
| 9. | Պենզաբլոկ ամերիկյան | 20սմ*40սմ | հատ | 600 |
| 10. | Գաջի անկյունակ | Ալյումինե, 270սմ | հատ | 700 |
| 11. | Սալիկ (կաֆել) | Կերամիկական սալիկ պատերի երեսապատման համար, 250x400 մմ չափսերով, մուգ երանգավորումով Եվրոպական արտադրության կամ համարժեք: | մետր | 120 |
| 12. | Մետլախ | Կերամիկական սալիկ հատակների համար, 400x400 մմ չափսերով, բաց երանգավորումով Եվրոպական արտադրության կամ համարժեք: | մետր | 20 |
| 13. | Սալիկի սոսինձ | 25 կգ պարկերով | պարկ | 80 |
| 14. | Սալիկի քսահարթիչ | 1 կգ պարկերով | կգ. | 15 |
| 15. | Ներկ լատեքսային մեծ | 22կգ դույլերով | հատ | 35 |
| 16. | Ներկի գույն /գունանյութ/ | "Պոլիժ" կամ համարժեք | հատ | 30 |
| 17. | Յուղաներկ | 2...3 լ. մետաղական կամ պլասմասյա տարրաներով , կիսափայլուն կամ փայլուն, սպիտակ գույնի յուղաներկ, Եվրոպական արտադրության կամ համարժեք: | լիտր | 30 |
| 18. | Լուծիչ | Յուղաներկի լուծիչ, 1 լ ապակյա կամ պլասմասյա տարրաներով, Ռուսական կամ համարժեք: | հատ | 20 |
| 19. | Վալիկ | 30սմ-40սմ | հատ | 35 |
| 20. | Խոզանակ | 4սմ-5սմ | հատ | 20 |
| 21. | Թղթե սկոչ | 4սմ-5սմ | հատ | 20 |
| 22. | Էլ. պղնձե լար | Հաղորդալար 2x2,5 մմ 2 ՊՊՎ պղնձե բազմաջիղ կամ միաջիղ հաղորդալար մեկուսիչ պատյանով ՄՈՍ ԿԱԲԵԼ կամ համարժեք: | մետր | 1700 |
| 23. | Եռաֆազ անջատիչ | Պլասմայա չայրվող կաղապարով, ջեռքի կառավարմամբ, միացման և անջատման ժամանակ | հատ | 5 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | կայցեր և հրդեհավտանգ իրավիճակ չառաջացնի, ինչպես նաև հոսանքի ուժի բարձրացման դեպքու անջատման տևողությունը չպետք է գերազանցի 1 վարկյանը, ռուսական կամ ֆրանսիական: | | |
| 24. | Միաֆազ անջատիչ | Կաղապարը չայրվող պլասմասից, միաֆազ 32 Ա, LEGRAND Ֆրանսիական կամ համարժեք: | հատ | 20 |
| 25. | Վարդակ | Վարդակ միաբևեռ կափարիչը կերամիկական կամ չայրվող պլասմաս, միջուկը կերամիկական միացումները լատունից MAKEL կամ համարժեք: | հատ | 100 |
| 26. | Անջատիչ | Անջատիչ միաբևեռ կափարիչը չայրվող պլասմաս, միջուկը կերամիկական միացումները լատունից MAKEL կամ համարժեք: | հատ | 40 |
| 27. | Անջատիչ երկտեղանոց | Անջատիչ միաբևեռ կափարիչը չայրվող պլասմաս, միջուկը կերամիկական միացումները լատունից MAKEL կամ համարժեք: | հատ | 10 |
| 28. | Էլ. վարդակի տուփ | պլաստմասյա /մատի միջի/ | հատ | 200 |
| 29. | Էլ. բաժանման տուփ | պլաստմասյա /մատի միջի/ | հատ | 30 |
| 30. | Շուշաթուղթ | Մանր,միջին և խոշոր հղկաթուղթ պատերը և առաստաղները ինճպես նաև մետաղական մակերևույթները հղկելու համար, 200..300 մմ լայնությամբ գլանափաթեթով, Ռուսական կամ համարժեք: | մետր | 20 |
| 31. | Լվացարան | Կերամիկական լվացարան 620x480 մմ , TREND Իտալական կամ համարժեք: | հատ | 22 |
| 32. | Ծորակ | Սառը ջրի համար նախատեսված ծորակ, ամրացումը լվացարանին  պատրաստման նյութը մետաղական կամ լատունից , փականը ամբողջական պտույտներով VENUS Իտալական կամ համարժեք: | հատ | 27 |
| 33. | Ճկուն խողովակ | Լվացարանների և զուգարանակոնքերի միացումը ճկուն խողովակով ջրատար խողովակաշարին, միացման գլխիկները  Ф15 մմ , երկարությունները 40...600 մմ եվրոպական կամ համարժեք: | հատ | 60 |
| 34. | Ջազլուշկա | 1,5 դույմ | հատ | 30 |
| 35. | Լվացարանի դյուբել | 10մմx80մմ | հատ | 30 |
| 36. | Սիֆոն | մեկ դույմ | հատ | 30 |
| 37. | Վինտիլ | ARKO 1/2 դույմ կամ համարժեք | հատ | 30 |
| 38. | Ֆում | 10մ-ոց /սպիտակ/ | հատ | 15 |
| 39. | Մեկուսիչ (իզոլենտ) | կապույտ, կպչուն | հատ | 25 |
| 40. | Խողովակ կոյուղու անցման | կոյուղու 100սմ-ոց, 2մ-ոց | մետր | 20 |
| 41. | Կոյուղու տարբեր դետալներ | ուզոլնիկ, տրայնիկ /100սմ-ոց/ | հատ | 20 |
| 42. | Մետաղապլաստե խողովակ | մետաղոպլաստ խողովակ տաք և սառը ջրի համար KALDE, PPR-AL-PEX 20 և  25 մմ, կամ համարժեք | մետր | 100 |
| 43. | Վինտիլ արկո | 1/2 դույմ | հատ | 30 |
| 44. | Սիլիկոն | մոնտաժի /սպիտակ/ | հատ | 30 |
| 45. | Օղափոխիչ | 150սմ-150սմ /լոգասենյակի/ | հատ | 5 |
| 46. | Դյուբել շուռուպ | 7սմ | հատ | 2000 |
| 47. | Փրփուր | մոնտաժային, | հատ | 30 |
| 48. | Էմուլսիա | 1լ-ով | լիտր | 50 |
| 49. | Հայելի | 45սմ-60սմ | հատ | 25 |
| 50. | Լուսատու | տիենկո 120 սմ | հատ | 30 |
| 51. | Հեռախոսի լար | երկջիղային | մետր | 200 |
| 52. | Ագրանիչիտել | մագնիսային | հատ | 20 |
| 53. | Զուգարանակոնք | կերամիկական, սպիտակ | հատ | 4 |
| 54. | Վինիլային հատակ | կապույտ,վինիլ | քառ. մ. | 350 |
| 55. | Ջեռուցման համակարգ N 1 | Ռադիատոր ONE 60  զույգ 50սմ, Վինտիլ ռադիատրի պայկա 1/2, Ռադիատրի կոմպլեկտ 1/2, Ամերիկանկա ներսի ռեզ.Ф 25, սպիտակ /15, Խողովակ կոմպոզիտ Ф40 /40մ/25x4մ, Ամերիկանկա ներսի ռեզ.Ф 40 սպիտակ.5/, Ամրակ Ф 40 /600/50, Դյուբելի պլաստմասա 7մմ, Շուռուպ 40*40, Տրայնիկ պեր. 40-20-40/80/ սպիտակ.2, Տրայնիկ 90 | լրակազմ | 1 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Φ25 սպիտակ /250/25, Տրայնիկ պերեխ. Φ25-20-25 սպիտակ /20, Անցում Φ40-Φ20 սպիտակ /300/20, Մուֆտ Φ40 /200/50, Մուֆտ Φ25 /600/50, Մուֆտ Φ20 /900/50, Խողովակ կոմպոզիտ Φ25 /80մ/25x4մ, Խողովակ կոմպոզիտ Φ20 /100մ/25x4մ, Անցում Φ25-Φ20 սպիտակ /800/50, Անկյունակ 90 Φ25 սպիտակ /400/20, Անկյունակ 90 Φ20 սպիտակ /700/50, Անկյունակ 45 Φ25 սպիտակ /500/50, Անկյունակ 45 Φ20 սպիտակ /700/50, Խաչուկ Φ 25 /200/ սպիտակ 25, Ամրակ Φ 25 սպիտակ /1000/100, Ամրակ Φ 20 սպիտակ /1400/100, Դյուբելի պլաստմասա 7մմ, Շուռուպ 40*40, Պակլի մեծ BT, Սիլիկոն թափանցիկ 280 ML, Ռադիատորի պրազլատկա | | |
| 56. | Ջեռուցման համակարգ N 2 * | Կաթսա Conika 20 IEFF տուրբո, Ռադիատոր ONE 60 զույգ 50սմ, Ռադիատոր կոմպլեկտ 1/2, Վինտիլ ռադիատրի պայկա 1/2, Կոմպլեկտ կաթսայի տակի /20/, Խողովակ կոմպոզիտ Φ25 /80մ/25x4մ, Խողովակ կոմպոզիտ Φ20 /100մ/25x4մ, Տրայնիկ 90 Φ25 /250/25 Տրայնիկ պերեխ. Φ25-20-25 /200/20, Տրայնիկ 90 Φ20 /400/50, Անկյունակ 90 Φ25 /400/20, Անկյունակ 90 Φ20 /700/50, Անկյունակ 45 Φ25 /500/50, Անկյունակ 45 Φ20 /700/50, Մուֆտ Φ25 /600/50, Մուֆտ Φ20 /900/50, Անցում Φ25-Φ20 /800/50, Ամրակ Φ 25 /1000/100, Ամրակ Φ 20 /1400/100, Դյուբելի պլաստմասա 7մմ, Շուռուպ 40*40, Պակլի մեծ BT, Սիլիկոն թափանցիկ 280 ML, Վիլկա MAKEL, Ստաբիլիզատոր, Ստաբիլիզատոր 3500 VA, Դյուբելի պլաստմասա 12*60 250 հատ, Շուռուպ 60*60, Գազի ֆիլտր 1/2, Շլանգ ճկուն երկաթյա գազ և ջուր 60, Անցում F3/4 x M 1/2, Բոչկա լատուն | լրակազմ | 1 |
| 57. | Շուշաթուղթ | 180-ոց | մետր | 50 |
| 58. | Շուշաթուղթ /զուբկա/ | 100-ոց | հատ | 200 |
| 59. | Ճաքերի սետկա | 10սմ-ոց | հատ | 20 |
| 60. | Ճաքերի սետկա | 1մ-ոց | մետր | 100 |
| 61. | Գիպսակարտոնի պրոֆիլ | F 47 | մետր | 100 |
| 62. | Գիպսակարտոնի նապրավլյայուշչի | U-26 | մետր | 500 |
| 63. | Գիպսակարտոնի շուռուպ | սև, 3սմ | հատ | 7000 |
| 64. | Հոսանքի պղնձե լար | 2x4 | մետր | 1000 |
| 65. | Ապահովիչ | 63 Ա | հատ | 10 |
| 66. | Գիպսակարտոնի դանակ և լեզվի | երկաթյա | հատ | 20 |
| 67. | Սվերլո | 6-ոց | հատ | 10 |
| 68. | Էլ. Լամպ | 60-Վտ | հատ | 25 |
| 69. | Էլ. Լամպ | 100-Վտ | հատ | 30 |
| 70. | Էլ. Լամպ | 150-Վտ | հատ | 30 |
| 71. | Հալոգենային լամպ | 120սմ | հատ | 50 |
| 72. | Հալոգենային լամպ | 60սմ | հատ | 50 |
| 73. | Զուգարանի զոֆռա | սպիտակ, զսպանակաձև | հատ | 4 |
| 74. | Վինտիլ ստյակի | 1/2 դույմ | հատ | 30 |
| 75. | Կախովի առաստաղ | սպիտակ, պլաստմասյա | քառ.մ | 25 |
| 76. | Հետադարձ խողովակ | 50մմ | մետր | 20 |
| 77. | Հատակի տռապ | 15սմ-15սմ | հատ | 5 |
| 78. | Մետաղ կտրող քար | 125x2.5x22,23մմ | հատ | 20 |
| 79. | Կաֆել կտրող քար | 115մմ x4.6 x22,23մմ | հատ | 3 |
| 80. | Ծորակ սառը ջրի | լատունից 15սմ-ոց | հատ | 10 |
| 81. | Կախովի առաստաղի լամպեր | սպիտակ, ալյումինե 100սմ-ոց սայնքով | հատ | 30 |
| 82. | Դռան միջուկ | 7սմ-ոց | հատ | 10 |
| 83. | Դռան միջուկ | 8սմ-ոց | հատ | 10 |
| 84. | Դռան միջուկ | 9սմ-ոց | հատ | 10 |
| 85. | Առաստաղի լուսատու | 120սմ | հատ | 30 |
| 86. | Առաստաղի լուսատու | 60սմ | հատ | 20 |
| 87. | Փայտե դռներ | Սպիտակ, 200սմx90սմ, փականով | հատ | 15 |

Պարտադիր պայման է հանդիսանում ապրանքի չօգտագործված լինելը:

Մատակարարման վայրը 1-55 և 57-87 չափաբաժինների համար՝ «Թիվ 8 Պոլիկլինիկա» ՓԲԸ:
*Մատակարարման վայրը 56 չափաբաժնի համար՝ «Թիվ 8 Պոլիկլինիկա» ՓԲԸ, հասցեն՝ ք. Երևան, Կիլիկիա 4:
**Բնութագրերում որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին կատարված հղումների հետ միասին հասկանալ նաև «կամ համարժեք» բառերը:

| ԳՆՈՐԴ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ք. Երևան, Բաղրամյան 51ա | ---------------------------------- |
| «Հայէկոնոմբանկ» ՓԲԸ | ---------------------------------- |
| Հ/Հ 163058361243 | |
| ---------------------------------- (ստորագրություն) | ---------------------------------- (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված 2
«____» ________________ 2____թ. կնքված
N ՀՀԵՑՊ-ՇՀԱՊՁԲ-14/1 ծածկագրով
գնման պայմանագրի

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
## Շինանյութերի

(հազար ՀՀ դրամ)

| հ/հ | Գնման ենթակա ապրանքների | | Նախատեսվում է գնել 2014թ. | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | I-IV եռամսյակ | | | |
| | անվանումը | Չափի միավ. | քանակը | գինը | քանակը | գինը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1. | Ցեմենտ | պարկ | 350 | | 350 | |
| 2. | Ավազ | պարկ | 1000 | | 1000 | |
| 3. | Գաջ | պարկ | 100 | | 100 | |
| 4. | Գիպսոնիտ | պարկ | 50 | | 50 | |
| 5. | Ֆուգենֆուլեր | պարկ | 35 | | 35 | |
| 6. | Ծեփամածիկ գիպսե | պարկ | 180 | | 180 | |
| 7. | Ծեփամածիկ մելից | պարկ | 100 | | 100 | |
| 8. | Գիպսակարտոն | հատ | 50 | | 50 | |
| 9. | Պեմզաբլոկ ամերիկյան | հատ | 600 | | 600 | |
| 10. | Գաջի անկյունակ | հատ | 700 | | 700 | |
| 11. | Սալիկ (կաֆել) | մետր | 120 | | 120 | |
| 12. | Մետլախ | մետր | 20 | | 20 | |
| 13. | Սալիկի սոսինձ | պարկ | 80 | | 80 | |
| 14. | Սալիկի քսահարթիչ | կգ. | 15 | | 15 | |
| 15. | Ներկ լատեքսային մեծ | հատ | 35 | | 35 | |
| 16. | Ներկի գույն /գունանյութ/ | հատ | 30 | | 30 | |
| 17. | Յուղաներկ | լիտր | 30 | | 30 | |
| 18. | Լուծիչ | հատ | 20 | | 20 | |
| 19. | Վալիկ | հատ | 35 | | 35 | |
| 20. | Խոզանակ | հատ | 20 | | 20 | |
| 21. | Թղթե սկոչ | հատ | 20 | | 20 | |
| 22. | Էլ. պղնձե լար | մետր | 1700 | | 1700 | |
| 23. | Եռաֆազ անջատիչ | հատ | 5 | | 5 | |
| 24. | Միաֆազ անջատիչ | հատ | 20 | | 20 | |
| 25. | Վարդակ | հատ | 100 | | 100 | |
| 26. | Անջատիչ | հատ | 40 | | 40 | |
| 27. | Անջատիչ երկտեղանոց | հատ | 10 | | 10 | |
| 28. | Էլ. վարդակի տուփ | հատ | 200 | | 200 | |
| 29. | Էլ. բաժանման տուփ | հատ | 30 | | 30 | |
| 30. | Շուշաբուղթ | մետր | 20 | | 20 | |
| 31. | Լվացարան | հատ | 22 | | 22 | |
| 32. | Ծորակ | հատ | 27 | | 27 | |
| 33. | Ճկուն խողովակ | հատ | 60 | | 60 | |
| 34. | Զագլուշկա | հատ | 30 | | 30 | |
| 35. | Լվացարանի դյուբել | հատ | 30 | | 30 | |
| 36. | Սիֆոն | հատ | 30 | | 30 | |
| 37. | Վինտիլ | հատ | 30 | | 30 | |
| 38. | Ֆում | հատ | 15 | | 15 | |
| 39. | Մեկուսիչ (իզոլենտ) | հատ | 25 | | 25 | |
| 40. | Խողովակ կոյուղու անցման | մետր | 20 | | 20 | |
| 41. | Կոյուղու տարբեր դետալներ | հատ | 20 | | 20 | |
| 42. | Մետաղապլաստե խողովակ | մետր | 100 | | 100 | |
| 43. | Վինտիլ արկղ | հատ | 30 | | 30 | |
| 44. | Սիլիկոն | հատ | 30 | | 30 | |
| 45. | Օդափոխիչ | հատ | 5 | | 5 | |
| 46. | Դյուբել շուռուպ | հատ | 2000 | | 2000 | |
| 47. | Փրփուր | հատ | 30 | | 30 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 48. | Էմուլսիա | լիտր | 50 | | 50 | |
| 49. | Դայելի | հատ | 25 | | 25 | |
| 50. | Լուսատու | հատ | 30 | | 30 | |
| 51. | Դեռախոսի լար | մետր | 200 | | 200 | |
| 52. | Ազդանիշիտել | հատ | 20 | | 20 | |
| 53. | Զուգարանակոնք | հատ | 4 | | 4 | |
| 54. | Վինիլային հատակ | քառ. մ. | 350 | | 350 | |
| 55. | Ջեռուցման համակարգ N 1 | լրակազմ | 1 | | 1 | |
| 56. | Ջեռուցման համակարգ N 2 | լրակազմ | 1 | | 1 | |
| 57. | Շուշաթուղթ | մետր | 50 | | 50 | |
| 58. | Շուշաթուղթ /գուբկա/ | հատ | 200 | | 200 | |
| 59. | Ճաքերի սետկա | հատ | 20 | | 20 | |
| 60. | Ճաքերի սետկա | մետր | 100 | | 100 | |
| 61. | Գիպսակարտոնի պրոֆիլ | մետր | 100 | | 100 | |
| 62. | Գիպսակարտոնի նապրավլյայուշչի | մետր | 500 | | 500 | |
| 63. | Գիպսակարտոնի շուռուպ | հատ | 7000 | | 7000 | |
| 64. | Հոսանքի պղնձե լար | մետր | 1000 | | 1000 | |
| 65. | Ապահովիչ | հատ | 10 | | 10 | |
| 66. | Գիպսակարտոնի դանակ և լեզվի | հատ | 20 | | 20 | |
| 67. | Սվերլո | հատ | 10 | | 10 | |
| 68. | Էլ. Լամպ | հատ | 25 | | 25 | |
| 69. | Էլ. Լամպ | հատ | 30 | | 30 | |
| 70. | Էլ. Լամպ | հատ | 30 | | 30 | |
| 71. | Հալոգենային լամպ | հատ | 50 | | 50 | |
| 72. | Հալոգենային լամպ | հատ | 50 | | 50 | |
| 73. | Զուգարանի գոֆռա | հատ | 4 | | 4 | |
| 74. | Վինտիլ ստյակի | հատ | 30 | | 30 | |
| 75. | Կախովի առաստաղ | քառ.մ | 25 | | 25 | |
| 76. | Հետադարձ խողովակ | մետր | 20 | | 20 | |
| 77. | Հատակի տռապ | հատ | 5 | | 5 | |
| 78. | Մետաղ կտրող քար | հատ | 20 | | 20 | |
| 79. | Կաֆել կտրող քար | հատ | 3 | | 3 | |
| 80. | Ծորակ սառը ջրի | հատ | 10 | | 10 | |
| 81. | Կախովի առաստաղի լամպեր | հատ | 30 | | 30 | |
| 82. | Դռան միջուկ | հատ | 10 | | 10 | |
| 83. | Դռան միջուկ | հատ | 10 | | 10 | |
| 84. | Դռան միջուկ | հատ | 10 | | 10 | |
| 85. | Առաստաղի լուսատու | հատ | 30 | | 30 | |
| 86. | Առաստաղի լուսատու | հատ | 20 | | 20 | |
| 87. | Փայտե դռներ | հատ | 15 | | 15 | |

* Մատակարարումներն իրականացվում են յուրաքանչյուր ամիս՝ըստ պատվիրատուի կողմից սահմանված քանակների, նկատի ունենալով, որ մատակարարման առաջին պատվերի տրամադրման և մատակարարման միջև ընկած ժամանակահատվածը չի կարող պակաս լինել 30 աշխատանքային օրից, եթե մատակարարը չի համաձայնում մատակարարումն իրականացնել ավելի կարճ ժամկետում: Ընդ որում հաջորդող պատվերների մատակարարումներն իրականացվում են պատվերի տրմանը հաջորդող 7 օրվա ընթացքում:

| ԳՆՈՐԴ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ք. Երևան, Բաղրամյան 51ա | ------------------------------- |
| «Հայ Էկոնոմբանկ» ՓԲԸ | ------------------------------- |
| հ/հ 163058361243 | |
| ------------------------------- | ------------------------------- |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված 3
«_____» __________________ 2_____թ. կնքված
N ՀՀԷ8Դ-ՇՀԱՊՁԲ-14/1 ծածկագրով
գնման պայմանագրի

# Վճարման ժամանակացույց*

ՀՀ դրամ

| N | Ապրանքի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2014թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1. | Շինանյութերի | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | **100 %** |

* *Վճարման ենթակագումարները ներկայացված են աճողական կարգով*

ԳՆՈՐԴ
ք. Երևան, Բաղրամյան 51ա
«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ
Հ/Հ 163058361243

\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-
(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-
\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-
\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-

\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 4
«___» __________ 2___թ. կնքված
N ՀՀԵՑԴ-ՇՀԱՊՁԲ-14/1 ծածկագրով
գնման պայմանագրի

| Վաճառող | Գնորդ |
|---|---|
| ________________ | ________________ |
| ________________ | ________________ |
| ________________ | ________________ |
| գտնվելու վայրը __________ | գտնվելու վայրը __________ |
| ՀՀ __________ | ՀՀ __________ |
| ________________ | ________________ |
| ՀՎՀՀ __________ | ՀՎՀՀ __________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___

## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«___» __________ 20___թ.
Պայմանագրի անվանումը՝ «____________________________»:
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «___» __________ 20___թ
Պայմանագրի համարը՝ --------------------

Գնորդը, ի դեմս -------------------------------------------------- և Վաճառողը՝ ի դեմս -------------------------, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները (այսուհետ՝ մատակարարումները) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Վաճառողը «___» __________ 20___թ.-ից «___» __________ 20___թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ մատակարարումները

| Գնման առարկայի անվանումը | Գնման առարկայի քանակական ցուցանիշները | Մատակարա-րումների կատարման ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| **Ընդամենը** | ------------- | ------------- | | ---------- |

Վերոհիշյալ մատակարարումների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Մատակարարումը հանձնեց | Մատակարարումները ընդունեց |
|---|---|
| ________________ (ստորագրություն) | ________________ (ստորագրություն) |
| ________________ (Ազգանուն, Անուն) | ________________ (Ազգանուն, Անուն) |
| ԿՏ | ԿՏ |